ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը).

Միլենա Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետը.

Ք. Միլան (Իտալիայի Հանրապետություն), 2025թ. մայիսի 3-ից մինչև մայիսի 7-ը

3. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը՝

Միլենա Հովհաննիսյանի՝ 2025թ. մայիսի 3-ից 7-ը ներառյալ ք. Միլան (Իտալիայի Հանրապետություն) գործուղման նպատակն է եղել Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ, Բանկ) 58-րդ տարեկան համաժողովին (այսուհետ՝ Համաժողով) մասնակցությունը:

Նշյալ համաժողովը համաշխարհային ֆինանսատնտեսական ոլորտի կարևորագույն իրադարձություններից է: Վերջինս արժեքավոր հարթակ է Բանկի անդամ երկրների համար՝ քննարկելու տարածաշրջանային տնտեսական մարտահրավերները, զարգացման առաջնահերթությունները և ֆինանսական համագործակցության հնարավորությունները: Հանդիպման ընթացքում իրականացվող միջոցառումները հնարավորություն են տվել կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին ձևավորելու համատեղ ռազմավարություններ, ներկայացնելու ազգային զարգացման ծրագրերը և քննարկելու ԱԶԲ-ի նոր նախաձեռնություններն ու ֆինանսավորման մեխանիզմները:

Միաժամանակ Համաժողովի շրջանակում տեղի ունեցող երկխոսությունները նպաստում են նոր ներդրումային հնարավորությունների բացահայտմանը և տարածաշրջանային համագործակցության խորացմանը: ԱՋԲ-ի տարեկան հանդիպումները ծառայում են որպես արդյունավետ հարթակ գործընկերային կապերի հաստատման համար, ինչը կարևոր նշանակություն ունի կայուն և ներառական տնտեսական աճի խթանման տեսանկյունից:

5. Քննարկված թեմաները՝

Համաժողովի օրակարգում ընդգրկված են եղել մի շարք հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ և այլ միջոցառումներ: Նշյալ միջացառումների շրջանակներում քննարկվել են ԱՋԲ-ի անդամ երկրների միջև զարգացման համագործակցության ընդլայնման ուղիները և ներառական տնտեսական աճին ուղղված առաջնահերթությունները: Մասնավորապես ԱՋԲ կառավարիչների խորհրդի նիստին քննարկված և քվեարկության ներկայացված թեմաներն են՝

1. ԱՋԲ-ի 2024թ. տարեկան զեկույցը
2. ԱՋԲ կանոնների և կարգավորումների վերանայումը
3. 2025 թվականի բյուջեն
4. ԱՋԲ ֆինանսական ռեսուրսները
5. Ֆինանսական հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվության ներքին վերահսկողության վերաբերյալ զեկույցը, անկախ աուդիտորի հաշվետվությունը
6. Զուտ եկամուտի բաշխումը
7. 2025-2026թթ, ԱՋԲ ընթացակարգերի հանձնաժողովի կազմը
8. 2025-2026թթ. ԱՋԲ տնօրենների խորհրդի նախագահի և փոխնախագահների ընտրությունը
9. ԱՋԲ-ի տնօրենների խորհրդում գենդերային բազմազանության վերաբերյալ զեկույցը
10. ԱՋԲ 60-րդ տարեկան հանդիպման (2027թ.) վայրն ու ամսաթիվը:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված և քննարկված հարցեր.

ԱԶԲ 58-րդ տարեկան համաժողովի ընթացքում Միլենա Հովհաննիսյանը ընդգրկված է եղել հայկական պատվիրակության կազմում, որի գործուղման օրակարգը հագեցած է եղել մասնակցությամբ ԱԶԲ կառավարիչների լիագումար նիստին (որպես ժամանակավոր փոխկառավարիչ), Բիզնես նստաշրջանին, ՀՀ ընկերակցակին խմբի նիստերին, երկկողմ հանդիպումներին, այդ թվում՝ *ԱԶԲ-ի նորանշանակ նախագահ Մ. Կանդայի հետ*, որի ընթացքում շեշտադրվել է հատկապես վերջին տարիներին Հայաստանի և ԱԶԲ-ի միջև ձևավորված արդյունավետ և վստահելի գործընկերությունը:

ԱԶԲ-ի գործադիր տնօրենի տեղակալ Լյուելլին Ռոբերթսի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ԱԶԲ-ի կողմից Հայաստանին տրամադրվող աջակցությունը, ընթացիկ վարկային ծրագրերի առաջընթացը, ինչպես նաև համագործակցության խորացման հնարավորությունները՝ ներառյալ մասնավոր հատվածի մասնակցության խթանումը:

Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD) ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ուշադրության կենտրոնում են եղել Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի Բարգուշատի թունելի կառուցման ֆինանսավորման հարցը, ջրայի ոլորտի ծրագրերը, ինչպես նաև քաղաքականության վրա հիմնված վարկային աջակցության ծրագրերի զարգացումները:

Կայացել է նաև *Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ, Բանկ) ներկայացուցիչների, Բանկի անդամ-երկրների և S&P վարկանիշային գործակալության* հանդիպումը ԵԶԲ վարկանիշի վերականգնման հարցով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԱԶԲ ներկայացուցիչների և վերոնշյալ այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում կողմերը հանդես են եկել առաջարկություններով համագործակցության ուղիների ընդլայնման, ՀՀ-ում և տարածաշրջանում նոր ծրագրերի իրականացման նպատակով:

9. Ստորագրություն, ամսաթիվ.

Միլենա Հովհաննիսյան

12.05.2025թ.